Հայոց՝ զոր խնքեանք լուցանեն՝ այլ Պատարագի և հոգեւոր պաշտօնի ոչ ունին սովորութիւն։ Իսկ Գրիգոր յամենայնի մերժէր զանեզի բանս նորա, և ոչ կամէր յափըշտակել իրաւանց իւրոց։ Դատաւորն խնդրեաց 'ի Գրիգոր Պատրիարքէ վկայիւք հաստատել զխնդիրն՝ զոր պահանջէր 'ի Լատինաց. և նա ածեալ կացոյց առաջի նորա զպյլազգիս Երուսաղէմի և Բեթղեհէմի. եւ նոքա ետուն բարւոք վկայութիւն թէ՝ Հայք կատարէին զպաշտօնս և զպատարագս իւրեանց յայրին Ծննդեան, և ոչ ոք էր որ հակառակ կայր նոցա. եւ դատաւորն 'ի գրի եհար զբան վկայութեան նոցին, և պատուիրեաց փոխանորդին Լատինաց 'ի բաց կալ 'ի հակառակութենէ, և չխափանել զպաշտօնս Հայոց եւ լուցանելոյ զկանթեղս իւրեանց, ١٠٢٩ (1618)։

Թէպէտեւ 'ի դատաստանի աստ և 'ի քննութեան՝ յայտնի եղեւ իրաւունք Հայոց, և հաստատեցաւ գրովք դատաւորին. այլ փոխանորդն Լատինաց ոչ առնոյր յանձն անսալ հրամանի դատաւորին, եւ ոչ ունկն մատուցանել վճռոյ նորին։ Այլ դարձեալ արգել զմուտս Հայոց յայրն Ծննդեան եւ խափանեաց զհոգեւոր պաշտօնս և զպատարագս նոցա։

Տրտմութիւն մեծ էր Գրիգորի և անպակաս ցաւ սրտի՝ յանիրաւ զրկանացն Լատինաց. սակայն և այնպէս ոչ կարաց թողուլ խպառ զայն 'ի ձեռաց. այլ անկաւ 'ի դրունս մեծամեծացն Երուսաղէմի, եւ հազիւ ուրեմն կարաց հանել զմիտս նոցա. հանրագրութեամբ ծանուցանել զիրան Արքայի, և հրովարտակաւ բառնալ զընդդիմութիւնս Լատինաց. եւ նոցա յանձն առեալ գրեցին զամենայն անցանս որք անցին ընդ Հայս եւ ընդ Լատինս. և թէ ո՞րպէս արհամարհեն նոքա զհրաման և զվճիռ դատաւորին, այլովքն հանդերձ. ընդ նմին առաքեցին և զվճիռ մեծի դենպետին, զոր առեալ էր յառաջագոյն Գրիգոր Պատրիարքն։ Ի հասանել թղթոց 'ի քաղաքն Կայսերական, գրեցաւ հրովարտակ 'ի հաստատութիւն իրաւանց եւ սովորութեանցն Հայոց. 'ի ١ ճէմազիլ էվվէլ ամսոյ, ١٠٢٩ (1619)։ Ցայս նուագ եւս մնացին Հայք յայրին Ծննդեան։

Գրիգոր Պարոն Տէր երկայնմտութեամբ տանէր դա-